

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԴԵՐՈՇ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայաստանում կատարվող տնտեսաիրավական բարեփոխումները, համաշխարհային տնտեսության վրա ավելի ու ավելի ազդող գլոբալացումը հարկադրում են նորովի գնահատել տնտեսական կյանքի ավանդական թվացող գործընթացները, փորձել կանխատեսելու արագ փոփոխվող աշխարհում դրանց դերն ու նշանակությունը:

Այդպիսի երևույթներից մեկն էլ, իրավամբ, կարելի է համարել կոոպերատիվ շարժումը, որն արդեն թևակոխել է իր գոյության երեքհարյուրամյակը և որպես տնտեսավարման համակարգ ոչ միայն հաստատում է իր ավանդական առավելությունները, այլև դրսևորում է նոր որակներ, որոնք աշխատանքային և սոցիալական հարաբերությունների այդ ձևը դարձնում են առավել հումանիստական և հասարակության կողմից պահանջարկ վայելող<sup>1</sup>:

Կոոպերատիվ համակարգում անդամների իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից ամենակատարյալ կազմակերպատիվական ձև են գյուղատնտեսական կոոպերատիվները:

*Գյուղատնտեսական կոոպերատիվը այդ ոլորտում գործունեություն ծավալելու համար անդամության հիմունքներով կամովին միավորված և պետության կողմից իրավունքի սուբյեկտ (իրավաբանական անձ) ծանաչված կազմակերպություն է, որը ստեղծվում է գույքային փայերի միավորման և անձնական աշխատանքային մասնակցության հիման վրա գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, վերամշակման և իրացման, ինչպես նաև օրենքով չարգելված այլ լրացուցիչ շահութաբեր գործունեություն իրականացնելու և կոոպերատիվի անդամների նյութական, սոցիալական ու մշակութային պահանջմունքները բավարարելու նպատակով:*

Որպես գյուղացիական, ազարակային տնտեսությունների միավորման նախնական ձև՝ գյուղատնտեսական կոոպերատիվն ապահովում է գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրությունը, կազմակերպությանը հնարավորություն է տալիս առանց ցնցումների հարմարվել շուկայական տնտեսությանը, գյուղատնտեսական արտադրությունը պաշտպանել շուկայի տարերային վայրիվերումներից:

Տնտեսապես զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ կոոպերացիան վերելք է ապրում այն երկրներում, որտեղ ստեղծված է կոոպերատիվ հարաբերությունների զարգացմանը ուղղված և պետու-

<sup>1</sup> Տե՛ս Գյտման Գ. Յ. և Ժր. Փորմի կոոպերատիվային շարժումը մարտկոչային շուկայի շրջանում: Մ., 2006, էջ 1:

թյան օժանդակությունը նպատակային օգտագործելու բարենպաստ ռեժիմ, որտեղ պետությունը, օժանդակելով կոոպերատիվներին, նրանց աջակցում է ստեղծման, զարգացման, վերանշակող սարքավորումների և սպասարկու գույքի ձեռքբերման, կադրերի պատրաստման, վերապատրաստման և այլ հարցերում:

Թերևս դա է այն հիմնական պատճառը, որ գյուղատնտեսական կոոպերատիվները առավել մեծ տարածում են ստացել Եվրամիության երկրներում և ճապոնիայում: Եվրամիության երկրներում գյուղատնտեսական արտադրանքի և պարենային շուկաներում գյուղատնտեսական կոոպերատիվների բաժինը կազմում է 50%, ճապոնիայում՝ 40%<sup>2</sup>: Ֆրանսիայում, Իտալիայում, Պորտուգալիայում և Գերմանիայում, որտեղ գինեգործությունը ուրոշիչ է գինու համաշխարհային շուկայի կոնյուկտուրայի ձևավորման հարցում, գինու 35-46%-ը (Ֆրանսիայում՝ մինչև 70%) արտադրում են կոոպերատիվները: Նիդեռլանդներում կոոպերատիվներն ապահովում են օսլայի համաշխարհային արտադրության և իրացման երրորդ մասը, շամպինյոնի և ծաղիկների 75 %-ը<sup>3</sup>:

Արևմտյան Եվրոպայի երկրների մեծ մասում պետության կողմից կոոպերատիվների առանձին տեսակներին ցույց տրվող օգնությունը համարվում է քիչ ապահովված խավի սոցիալական պաշտպանության քաղաքականության կարևոր բաղադրամաս և իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- ա) կոոպերատիվների ստեղծմանն օժանդակում,
- բ) ճկուն հարկային քաղաքականության իրականացում,
- գ) միջազգային կոոպերատիվ շարժման սկզբունքներին և կոոպերացիայի զարգացման առանձնահատկություններին համապատասխանող օրենքների և այլ իրավական ակտերի ընդունում,
- դ) կոոպերատիվ կազմակերպություններին պատվերների և որոշակի աշխատանքների կատարման, ինչպես նաև ծառայությունների մատուցման բնագավառում արտոնությունների վերապահում,
- ե) կոոպերատիվ գործունեության իրականացման համար հողատարածքների տրամադրում,
- է) կոոպերատիվների և նրանց անդամների իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության պայմանների ստեղծում,
- ը) կոոպերատիվների համար մասնագետների պատրաստում,
- թ) սոցիալական գործունեության կոոպերատիվ ձևի առավելությունների մասին բնակչությանը տեղեկատվության տրամադրում:

Նման մոտեցում անհրաժեշտ է որդեգրել նաև Հայաստանի Հանրապետությունում: Սակայն ստիպված ենք արձանագրել, որ Հայաստանում պետական մակարդակով դեռևս հստակ ռազմավարություն չկա քաղաքակիրթ շուկայական հարաբերություններին և քաղաքացիական հասարակության անցնելու գործում կոոպերատիվների դերակատարության մասին, ուստի դրանց ստեղծման ուղղությամբ լուրջ քայլեր չեն ձեռնարկվում: Մինչդեռ գյուղատնտեսության ներկա վիճակը, պարենային

<sup>2</sup> Տե՛ս "Сельскохозяйственные потребительские заготовительные и снабженческо-сбытовые кооперативы". Бухгалтерский учет: Учебное пособие. М., 2007, էջ 9:

<sup>3</sup> Տե՛ս "Евроазиатский международный научно-аналитический журнал. Мировой опыт развития сельскохозяйственной кооперации". <http://www.m-ru/art.php3?artid=22046>

անվտանգության ապահովման հրատապությունը պահանջում են արտադրական ներուժի առավել արդյունավետ օգտագործման համար կոոպերացնել գյուղացիական (ագարակային) տնտեսությունները, գյուղատնտեսական տարբեր կոոպերատիվների ստեղծման միջոցով բարձրացնել գյուղմթերքներ արտադրողների «շուկայական ներուժը» և առանց գյուղացիական (ագարակային) տնտեսությունների շահերը ոտնահարելու օգտագործել խոշոր ապրանքային արտադրության առավելությունները:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության «զարգացման» քսանամյա պատմությունը վկայում է, որ մեր երկրում ագրոպարենային համալիրի զարգացումը հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման և ագրարային ոլորտի տնտեսական հարաբերությունները պետականորեն ղեկավարելու միջոցով: Ակնհայտ է, որ, չնայած գյուղատնտեսության կոոպերացման անհրաժեշտությանը, առանց պետության միջամտության և աջակցության Հայաստանում գյուղատնտեսական կոոպերատիվներ մոտ ապագայում չեն ստեղծվի:

Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող գյուղացիական տնտեսություններն ու ագարակատերերը ի վիճակի չեն կոոպերատիվներ ստեղծելու իրենց կազմակերպական տարանջատվածության, կառուցվածքային անկատարության, ամբողջապես շուկայից կախվածության և արտադրական գործընթացում զբաղվածության հետևանքով: Այլ կերպ ասած՝ գյուղացին հողից գլուխը բարձրացնելու հնարավորություն և կոոպերացիայի մասին մտածելու ժամանակ չունի: Պակաս կարևոր չէ այն իրողությունը, որ գյուղատնտեսական կոոպերատիվի մասին գյուղացու պատկերացումները զուգորդվում են կոլտնտեսությունների մասին նախկին ըմբռնումներին:

Հայաստանի Հանրապետության ագրարային սեկտորի հետագա զարգացումը կախված է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հետևողական բարեփոխումներից: Ագրոպարենային ոլորտում կոոպերատիվ հարաբերությունների զարգացման առաջնահերթ խնդիրներից են մշակել և ընդունել ագրոպարենային համալիրում գյուղատնտեսական կոոպերացիայի համալիր ծրագիր, որով գյուղատնտեսության կոոպերացումը պետք է համարվի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

Ծրագրի իրականացման համար բյուջեում պետք է նախատեսել կոոպերացիայի զարգացման համար անհրաժեշտ միջոցներ, որոնք կուղղվեն գյուղատնտեսական մթերքներ արտադրող, վերամշակող, պահեստավորող և իրացնող կոոպերատիվների ստեղծմանը, տեխնիկական ապահովվածությանը, ագրոսպասարկող կազմակերպությունների վերակազմակերպմանը կոոպերատիվների, գիտա-ուսումնական և խորհրդատվական կենտրոնների ստեղծումը, կոոպերատիվ շարժման գիտական ապահովմանը: Ծրագրում, մեր կարծիքով, որպես առաջնահերթ խնդիր պետք է նախատեսվեն տարբեր տեսակի գյուղատնտեսական կոոպերատիվների (առաջին հերթին՝ գյուղատնտեսական ապրանք արտադրող և դրանց վաճառքով զբաղվող) գործունեության իրավական ու տնտեսական հիմքերը սահմանող և գործունեությունը կանոնակարգող օրենսդրության մշակումն ու ընդունումը:

Ակնհայտ է, որ գյուղատնտեսական ապրանք արտադրողների կողմից պերագիան՝ որպես սոցիալական տնտեսության կառուցվածքային օղակ, գյուղացիական տնտեսությունների համար շուկայական հարաբերություններում իրենց շահերը արդյունավետ պաշտպանելու միակ ձևն է: XX դարի սկզբին կողպերացիայի բնագավառի բոլոր խոշոր հեղինակություններն ընդգծում էին, որ նախատեսելով առանձին սուբյեկտների արտադրական և կոներցիոն ինտեգրում՝ կողպերացիան միաժամանակ ենթադրում է դրանց լիակատար ինքնուրույնություն<sup>4</sup>: ՀՀ-ում կողպերացիան կարող է լուրջ գործոն դառնալ գյուղացիական, ագարակային տնտեսությունների միավորման, գյուղատնտեսական ապրանք ստեղծողների արտադրողականության և մրցունակության բարձրացման գործում: Մենք համամիտ ենք այն իրավագետների հետ, որոնք գտնում են, որ կողպերացունը գյուղացու համար իր բարեկեցությունն ապահովելու միակ հնարավոր և անփոխարինելի միջոց է<sup>5</sup>: Հետևաբար, այդ խնդրի իրականացման նպատակով անհրաժեշտ է գյուղացիական և ագարակային տնտեսությունների կամավոր միավորման միջոցով ստեղծել գյուղատնտեսական ապրանք արտադրող խոշոր տնտեսություններ կազմավորելու համար բավարար տնտեսական, կազմակերպական, սոցիալական պայմաններ, մշակել գյուղատնտեսական արտադրական և սպառողական կողպերատիվի ստեղծման, գործունեության իրականացման, իրավասուբյեկտության հարցերը կանոնակարգող օրենսդրություն, ակտիվացնել կողպերատիվների ստեղծման գործում պետական միջամտությունը:

Իհարկե, գյուղատնտեսական արտադրանք արտադրող խոշոր կազմակերպություններ կարող են ստեղծվել նաև գործող օրենսդրությամբ նախատեսված կազմակերպատիրավական այլ ձևերով (տնտեսական ընկերակցություններ, ընկերություններ), բայց սակավահող պետության պարենային անվտանգության ապահովման համար առավել կարևորը արտադրական կողպերատիվներում գյուղացիական (ագարակային) տնտեսությունների փոքր հողակտորների միավորմամբ խոշոր ապրանքային արտադրության կազմակերպումն է, որի համար ամենակատարյալ կազմակերպատիրավական ձևը արտադրական կողպերատիվն է: Նախապատվությունը պետք է տրվի արտադրության կազմակերպատիրավական այդ ձևին այն պարզ պատճառով, որ արտադրական կողպերատիվը գործարարական գործունեության կազմակերպման յուրահատուկ ձև է: Այն հիմնվում է արտադրող սեփականատերերի կամավոր համագործակցության վրա և օրգանապես միավորում է քաղաքացիների իրավունքների, ազատությունների և շահերի այնպիսի ծավալ, որը հատուկ չէ գործարարության որևէ այլ կազմակերպատիրավական ձևի: Արտադրական կողպերատիվները՝ որպես արտադրությամբ, հումքի և նյութերի վերամշակմամբ, արտադրանքի վաճառքով, աշխատանքների կատարմամբ և այլ ծառայությունների մատուցմամբ զբաղվող սուբյեկտներ, անդամների աշխատանքային մասնակցությամբ և պատասխանատվությամբ շահեկանորեն տարբերվում են ընկերակցություններից և ընկերություններից: Գյուղատնտեսական արտադրական կողպերատիվները՝ որ-

<sup>4</sup> Տե՛ս Гутман Г. В. и др. Удл. աշխ., էջ 122:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 123:

պես մասնավոր սեկտորի կազմակերպություններ, ստեղծվում և գործում են անդամների նախաձեռնությամբ, կառավարման ժողովրդավարական հետևյալ սկզբունքներով՝ մեկ անդամ՝ մեկ ձայն, շահույթի հավասար բաշխում, անդամների սահմանափակ պատասխանատվություն<sup>6</sup>:

Գյուղատնտեսական կոոպերատիվները ստեղծվում են ժողովրդավարական հետևյալ սկզբունքներով՝

1. կոոպերատիվ մտնելու և դուրս գալու կամավորություն,
2. ժողովրդավարական կառավարում և հսկողություն,
3. անդամների նյութական մասնակցություն,
4. ինքնակառավարում և անկախություն,
5. կրթություն, որակավորման բարձրացում և տեղեկատվական ապահովվածություն,
6. կոոպերատիվ կազմակերպությունների համագործակցություն,
7. հոգատարություն հասարակության նկատմամբ<sup>7</sup>:

Արտադրական կոոպերատիվը անդամության սկզբունքով միավորված, անձնական աշխատանքով կազմակերպության գործունեությանը մասնակցող և կորպորատիվ հիմունքներով նրա գործունեությունը ղեկավարող քաղաքացիների կամավոր միություն է: Կոոպերատիվն այն կազմակերպությունն է, որում միահյուսված են շահույթ ստանալու և փոխօգնություն ցուցաբերելու նպատակները: Կոոպերատիվում ղեկավար ուժը ոչ թե կոոպերատիվի նյութական բազան ստեղծելու համար կապիտալ ներդրողներն են, այլ այն տնտեսությունը, որին սպասարկելու համար ներդրվել է կապիտալը: Կոոպերատիվը կառավարում են նրա անդամները ինքնակառավարման սկզբունքներով: Կոոպերատիվի կառավարման մարմիններում կարող են ընտրվել միայն կոոպերատիվի անդամները: Կոոպերատիվում հիմնական աշխատուժը վարձու աշխատուժ չէ. այստեղ գործում է ինքնավարձման՝ որպես կոոպերատիվի կազմակերպման գլխավոր սոցիալ-տնտեսական հատկության սկզբունք<sup>8</sup>:

Առավել կարևորն այն է, որ գյուղատնտեսական կոոպերատիվներում ծանրության կենտրոնը կապիտալից տեղափոխվում է գյուղմթերքների արտադրողների վրա: Կոոպերատիվի վճռորոշ նպատակն իր անդամներին բարիքներ, ծառայություններ մատուցելը, նրանց ազատ շուկայի պայմաններից առավել շահավետ պայմաններով աշխատանք տրամադրելը<sup>9</sup>, իր անդամների սոցիալական պաշտպանվածությունն ապահովելն է:

Կոոպերատիվն իր անդամներին հնարավորություն է տալիս.

- ազատորեն օգտագործելու գույքը գործարարական գործունեության համար,
- տիրապետել, օգտագործել և տնօրինել գույքը ոչ թե միանձնյա, այլ մյուսների հետ համատեղ,

<sup>6</sup> Տե՛ս "Сельскохозяйственные потребительские заготовительные и снабженческо-бытовые кооперативы", էջ 10:

<sup>7</sup> Տե՛ս "Сельскохозяйственная кооперация как форма развития предпринимательской деятельности в агропромышленном комплексе", էջ 17, <http://www.nauka-shop.com/mod/shop/produktID/35775/>

<sup>8</sup> Տե՛ս "Предпринимательское право Российской Федерации". М., 2005, էջ 237-238:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 238:

- ազատորեն դրսևորել իր գործարարական ունակությունները,  
- իրացնել աշխատանքի, գործունեության և մասնագիտության ազատ ընտրության իրավունքը<sup>10</sup>:

Արտադրական կոոպերատիվն իրավունքի այլ սուբյեկտներից տարբերվում է նաև անդամների պարտականությունների առանձնահատկությամբ: Նրա անդամները, բացի աշխատանքային մասնակցությունից, կոոպերատիվի միջոցների ձևավորման համար նուժում են փայլավճար և վերահսկում են միջոցների ծախսը: Նրանք են որոշում եկամուտների բաշխման կարգը: Նրանք պարտավոր են տարեկան հաշվետվության հաստատունից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացուցիչ վճարների միջոցով փակել առաջացած վնասները, լրացուցիչ պատասխանատվություն կրել կոոպերատիվի գործունեությամբ այլ անձանց պատճառած վնասի համար և այլն: Դա նշանակում է, որ կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է կոոպերատիվի պարտքերի համար իր անձնական ունեցվածքով, եթե կոոպերատիվը պարտքերի մարման համար բավարար միջոցներ չունի<sup>11</sup>: Այսինքն՝ կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ և՛ անձնական (բարոյական, կարգապահական, աշխատանքային), և՛ նյութական պատասխանատվություն է կրում կոոպերատիվի գործունեության համար: Յուրաքանչյուր անդամ նաև շահագրգռված է կոոպերատիվի աշխատանքների արդյունավետության և արտադրողականության բարձրացման գործում, քանի որ դրանից է կախված նրա աշխատավարձի և նյութ եկամուտների չափը: Մասնավորապես, կոոպերատիվի շահույթը (ի տարբերություն այլ իրավաբանական անձանց) անդամների միջև բաժանվում է ոչ թե նրանց փայլավճարների համամասնությամբ, այլ աշխատանքային մասնակցությանը համապատասխան, եթե այլ կարգ նախատեսված չէ օրենքով կամ կոոպերատիվի կանոնադրությամբ: Օրինակ՝ 19-րդ դարի վերջում ընդունված «Կոոպերացիայի մասին» օրենքը, որը մինչև օրս գործում է, սահմանում է, որ կոոպերատիվի մաքուր շահույթը բաշխվում է հետևյալ կերպ՝ 4%-ը ըստ փայլավճարների, իսկ 96%-ը՝ ըստ աշխատանքային մասնակցության<sup>12</sup>:

Բացի արտադրական կոոպերատիվներից՝ օրակարգային խնդիր պետք է համարվի նաև գյուղատնտեսական մթերքներ իրացնող (վաճառահանող) կոոպերատիվների ստեղծումը: Դա պայմանավորված է օբյեկտիվ լուրջ պատճառներով: Գյուղացիական (ազարակային) տնտեսությունները տնտեսական գործունեության իրականացման ընթացքում հանդիպում են մի շարք դժվարությունների.

- որակյալ սերմացուի, էլիտար անասունների, անասնակերի, պարարտանյութի և թունաքիմիկատների պակաս,
- ագրոնոմիական, անասնաբուժական և զոոտեխնիկական ծառայությունների, արտադրության հաշվառման, ստուգումների կազմակերպման բարդություններ,
- գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարություն,
- մեքենասարքավորումների վերանորոգման կազմակերպում,

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 239:

<sup>11</sup> Տե՛ս "Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части первой (постатейный)". Изд. 3-е. М., 2005, էջ 287:

<sup>12</sup> Տե՛ս Гутман Г. В. и др. նշվ. աշխ. էջ 292:

- արտադրված արտադրանքի իրացման դժվարություններ,
- արտադրանքի պահպանման, մշակման, տարայավորման և փաթեթավորման համար անհրաժեշտ հնարավորությունների անբավարարություն և այլն:

Այդ խնդիրների լուծման համար ագրոբիզնեսի ոլորտում ստեղծվող մատակարարող-իրացնող, ագրոսպասարկող և վերամշակող կազմակերպությունները գյուղատնտեսական ապրանք արտադրողներին ոչ ծահավետ պայմաններով ծառայություններ են առաջարկում, ավելացնում են գյուղատնտեսության և արտադրության միջև գների անզուգադրելիությունը՝ ֆիսպարիտետը:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, գյուղացիական (ագարակային) տնտեսությունների և փոքր գյուղատնտեսական կազմակերպությունների սպասարկման խնդիրների լուծման առավել ընդունելի եղանակ է գյուղմթերքներ արտադրողների կողմից սպառողական կոոպերատիվների ստեղծումը, որոնցից մեր հանրապետության համար առաջնահերթ է **գյուղատնտեսական մթերքներ իրացնող** կոոպերատիվների ստեղծումը:

Շուկայական հարաբերությունների պայմաններում գյուղատնտեսական ապրանք արտադրողների համար դժվար է հավասար հիմունքներով մասնակցել միջոցառումներին մրցակցությամբ, որի հետևանքով առաջանում է գների անհամամասնություն, վերամշակող և ագրոսերվիսային կազմակերպությունների մենաշնորհի ուժեղացում, ուստի գյուղատնտեսական ապրանքների շատ տեսակների արտադրությունը դառնում է անշահավետ կամ վնասաբեր<sup>13</sup>:

Ջարգացած երկրների փորձը վկայում է, որ ազատ շուկայի մեխանիզմներն անբավարար են տնտեսության այլ ոլորտների պես գյուղատնտեսական արտադրանքի և ծառայությունների պարիտետային գներ սահմանելու համար<sup>14</sup>: Այդ բնագավառում է, որ գյուղմթերքներ արտադրողները շուկայում իրենց «տնտեսական կշռի» ավելացման կարիք են զգում: Այդ պատճառով գյուղատնտեսական ապրանք արտադրողները շուկայում եկամուտների ոչ համամասնական բաշխման բնական մեխանիզմին սովորաբար հակադրվում են իրենց տնտեսական շահերը խոշոր ապրանքարտադրողներից, առևտրային կազմակերպություններից և բանկերից համատեղ պաշտպանվելու համար տարբեր տեսակի միությունների կամ կոոպերատիվների մեջ միավորվելով՝ նախապատվությունը տալով գյուղատնտեսական մթերքներ իրացնող սպառողական կոոպերատիվներին:

Իրացնող գյուղատնտեսական կոոպերատիվներն իրենց անդամներից արտադրանք գնելիս, ի տարբերություն այլ վերամշակող և գնորդ կազմակերպությունների, ղեկավարվում են **ներկոոպերատիվային շահերի պահպանության և արդարության սկզբունքներով**: Եթե այլ կազմակերպությունների համար գնված գյուղատնտեսական ապրանքի վրա ծախսված գումարներն արտադրական ծախսեր են, որը նվազեցնելու համար նրանք ձգտում են հնարավորինս ցածր գին վճարել, ապա իրաց-

<sup>13</sup> Տե՛ս <http://www.nauka-shop.com/mod/shop/produkt ID/35775/>

<sup>14</sup> Տե՛ս "Сельскохозяйственные потребительские заготовительные и снабженческо-сбытовые кооперативы", էջ 12:

նող կոոպերատիվներն արտադրողից արտադրանքը գնելիս ագրարային կոոպերացիայի յուրահատուկ մեխանիզմների ուժով օբյեկտիվորեն շահագրգռված են իրենց անդամներին վճարելու արդար գին: Միևնույն ժամանակ, կոոպերատիվները, գտնվելով ոչ կոոպերատիվ կազմակերպությունների հետ մրցակցության մեջ, նրանց առաջարկում են իրականությանը համապատասխանող գներ: Նման գործելակերպը երաշխիք է, որ գյուղատնտեսական մթերքներ իրացնող (վաճառահանող) կոոպերատիվները կօժանդակեն գյուղացիական (ագարակային) տնտեսություններին՝ հաղթահարելու բազմաթիվ տնտեսական, սոցիալական և այլ խնդիրներ, կօժանդակեն փոքր ագրոբիզնեսի ներքին պոտենցիալի առավել լրիվ բացահայտմանն ու արդյունավետ օգտագործմանը: Կարելի է վստահորեն անդել, որ առանց գյուղատնտեսական արտադրանքն իրացնող կոոպերատիվների գյուղատնտեսությունը վարելու փոքր ձևերը չեն զարգանա, չեն դառնա երկրի գյուղատնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու իրական գործոն: Եթե փոքր ագրոբիզնեսը գյուղատնտեսությունը և գյուղը վերականգնելու գլխավոր ուղղություններից մեկն է, ապա կոոպերացիան փոքր ագրոբիզնեսի զարգացման, դրա խոշորացման անհրաժեշտ նախապայման է: Դա է վկայում նաև զարգացած երկրների գյուղատնտեսության կոոպերացման փորձը: Այդ երկրների գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների ժամանակակից կառուցվածքում առավել մեծ տարածում ունեն գյուղատնտեսական մթերքներ արտադրող, վերամշակող և իրացնող կոոպերատիվները: Իհարկե, այդ երկրների կոոպերատիվ համակարգում քիչ դերակատարություն չունեն նաև գյուղատնտեսությանը արտադրամիջոցներ մատակարարող, ծառայություններ մատուցող, վարկավորող կոոպերատիվները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, անկախ տեսակից, գյուղատնտեսական կոոպերացիայի հիմքը բոլոր դեպքերում անհատական անդամության վրա հիմնված սկզբնական կոոպերատիվ կազմակերպություններն են: Այդ կոոպերատիվներն իրենց գործունեության արդյունավետության բարձրացման և շահերի պաշտպանության նպատակով միավորվում են կոոպերատիվ միությունների մեջ՝ ստեղծելով «կոոպերատիվների կոոպերատիվներ»՝ ճյուղային միություններ, որոնք էլ հնարավորություն են ընձեռում իրականացնելու գյուղատնտեսական արտադրության պետական կառավարում, իրագործելու պետական և տեղական ծրագրեր, ներդնելու տեխնիկայի, ագրոկանոնների նորույթները, իրականացնելու արդյունավետ ֆինանսատնտեսական քաղաքականություն:

Շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ գյուղատնտեսական կոոպերատիվների համակարգի ձևավորումը ագրոպարենային համալիրում գործարարության զարգացման անհրաժեշտ պայման է: Ընդ որում, ագրոպարենային համալիրի զարգացման հիմք պետք է համարվի կոոպերացիայի ներքին (սկզբնական) օղակների կառուցման ճյուղային սկզբունքի միահյուսումը կոոպերատիվ միությունների համակարգի կազմակերպման տարածքային սկզբունքի հետ:

Կոոպերացիան կարող է հաջողություն ունենալ, երբ կառուցվում է ինքնուրույնության, ստեղծագործական նախաձեռնության, ազատության և ինքնավարության սկզբունքների վրա: Հաջող կոոպերատիվ նախա-

գծեր կարելի է ակնկալել այնտեղ, որտեղ կոոպերատիվի անդամները ցանկանում են իրենց ուժերով մասնակցել կոոպերատիվների զարգացմանը, և որտեղ ի վիճակի են շոշափելի ավանդ ներդրել իրենց կազմակերպության իրական տնտեսական պոտենցիալն ավելացնելու գործում:

Պետությունը պետք է իրականացնի կոոպերատիվ շարժման կազմակերպման, կոոպերացիայի գործունեությանը օժանդակություն ցուցաբերելու, կադրերի պատրաստման և կոոպերացիայի առավելությունների քարոզման գործառնություններ, ապահովի կոոպերատիվների ինքնագործունեությունն ու ինքնուրույնությունը, բացառի կոոպերատիվների ստեղծման գործում վարչարարությունը, քանի որ կառավարական չինովնիկների կողմից տեղական կոոպերատիվների ստեղծումն ու ղեկավարումը, ինչպես նաև նրանց կողմից կառավարական ծրագրերի ներդրումը գործնականում ճանաչվել է ոչ արդյունավետ<sup>15</sup>: Առավել լայն տարածում ունի այլընտրանքային մեթոդը, որը ստացել է «մանկավարժական մոտեցում» անվանումը: Այդ մեթոդի էությունն այն է, որ տեղական կոոպերատիվ կազմակերպությունները ստեղծվում են դրսի հիմնադիրների կողմից՝ տեղի բնակչության մասնակցությամբ, առաջինների կողմից իրենց սեփական կազմակերպությունը ստեղծելուն օժանդակող անհրաժեշտ տեղեկատվություն, ուսուցում և խորհրդատվություն ստանալուց հետո<sup>16</sup>:

Շարադրվածից կարող ենք եզրակացնել, որ *անհրաժեշտ է ծշգրտել և զգալիորեն ընդլայնել գյուղատնտեսական կոոպերատիվների իրավական կարգավիճակը, նրա անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական բազան, համաշխարհային հանրության կողմից ընդունված սկզբունքների և արժեքների հաշվառմամբ ստեղծել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և շուկայական հարաբերություններին նրանց ակտիվ մասնակցությունն ապահովելու իրավական հիմքեր*<sup>17</sup>: Դա, մեր կարծիքով, *հնարավոր է իրականացնել գյուղացիական և ագարակային տնտեսությունների կոոպերացմանը ոչ միայն փաստացի, այլև օրենսդրորեն խթանելու եղանակով*:

Գործող օրենսդրությունը նման հնարավորություն չի ընձեռում, որովհետև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ կոոպերատիվների իրավասուբյեկտության հարցերը կարգավորող նորմերում խառնաշփոթ է<sup>18</sup>: Չեն ընդունվել «Կոոպերացիայի մասին», «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքներ: Մշակված չեն գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվների ներքին հարաբերությունները կարգավորող տիպային փաստաթղթեր, մասնավորապես՝ «Ներտնտեսական ենթակառուցվածքների մասին», «Հողերի և գույքային փայավճարների համար հաշվարկվող կոոպերատիվ վճարումների և շահաբաժինների մասին», «Կոոպերատիվներում պայմանագրային հարաբերությունների մասին», «Կոոպերատիվներում կենտրոնացված և այլ հատուկ ֆոնդերի ձևավոր-

<sup>15</sup> Տե՛ս **Тычинин С. В.** Роль государства в развитии кооперации (правовой аспект). // "Российский конституционализм и современные тенденции развития правовой системы (К 10-летию принятия Конституции РФ)". Белгород, 2003, էջ 19:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 19:

<sup>17</sup> Նույնը վերաբերում է նաև սպառողական կոոպերատիվներին, քանի որ նրանց կարգավիճակը Քաղ. օր.-ով ընդհանրապես կարգավորված չէ:

<sup>18</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը միմյանց է խառնել արտադրական և սպառողական կոոպերատիվները:

ման և օգտագործման մասին» և այլն: Այլ խոսքով՝ ՀՀ-ում բացակայում է կոոպերատիվների տարբեր տեսակների ստեղծումն ու գործունեության բնականոն իրականացումն ապահովող օրենսդրական բազան:

Բավական է նշել, որ ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ նախատեսված էր «Գյուղատնտեսական կազմակերպությունների և կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը մշակել 2006-2007 թթ.<sup>19</sup>, որը մինչև օրս չի իրականացվել:

**ТАРИЕЛ БАРСЕГЯН – Роль сельскохозяйственных кооперативов при рыночных отношениях.** – Двадцатилетний опыт свидетельствует, что развитие агропромышленного комплекса в Армении можно обеспечить только с помощью сельскохозяйственных кооперативов и государственного руководства экономическими отношениями в аграрном секторе. Для этого необходимо разработать и принять программу развития сельскохозяйственной кооперации, а также предусмотреть необходимые средства для создания производственных, перерабатывающих и других сельхозкооперативов. В силу своей организационной разобщённости и зависимости от рыночной конъюнктуры мелкие крестьянские и фермерские хозяйства не способны развиваться без помощи государства. Чтобы повысить их заинтересованность в объединении, следует подготовить экономические, организационные и социальные предпосылки, разработать законодательные акты – как регулирующие создание производственных и потребительских сельскохозяйственных кооперативов, так и устанавливающие их специальную правосубъектность.

Опыт развитых стран свидетельствует, что механизмов свободного рынка недостаточно, чтобы обеспечить конкурентоспособность мелких сельхозпроизводителей, и кооперация – единственно верный способ выйти из сложившегося положения. Кроме того, кооперация поможет крестьянским и фермерским хозяйствам преодолеть нынешние трудности. Как показывает мировой опыт, созданная на основе общепринятых принципов и ценностей нормативная база является необходимым и эффективным условием формирования и развития сельскохозяйственной кооперации.

На основе вышесказанного предлагается разработать и принять законы «О кооперации», «О формировании уставного капитала и специальных фондов кооператива» и др.

**TARIEL BARSEGHYAN - The Role of Agricultural Cooperatives in Market Relations.** - The development of agriculture in Armenia over the past twenty years testifies that the growth of agribusiness can be ensured only when agricultural cooperatives are created and the state management of economic relations takes place.

To ensure the development of the agrarian sector in RA, it is essential that a program on agricultural cooperation development should be implemented and the necessary means for the creation of industrial, manufacturing, and other agricultural cooperatives should be provided. Due to their organizational dissociation, employment and dependence from market conjecture, small farms and agricultural enterprises cannot develop without the state support.

---

<sup>19</sup> Տե՛ս «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն (վերանայած տարբերակ), Հավելված № 2», ՀՀՊՏ № 22(526), 10 հունվարի, 2007, էջ 70:

To increase the interest of the mentioned enterprises in amalgamation, it is necessary to create economic, organizational, and social prerequisites. Thus, it is essential that legislative acts with provisions for the foundation of industrial and manufacturing agricultural cooperatives should be adopted, as well as a special legal personality of these cooperatives should be set.

The experience of the developed countries shows that free market economy mechanisms are not sufficient to ensure the competitiveness of small agribusiness with the subjects of other business fields. For that reason, cooperation is the only way to overcome the current situation in agriculture. It will also help the agricultural enterprises and farms to overcome the difficulties they encounter at present. The international experience demonstrates that the creation of a legislative base set up on the internationally accepted rules and values is an essential and effective predictor of agricultural cooperation foundation and development.

Taking into account the abovementioned and the fact that there is no corresponding appropriate legislative base in RA, we would suggest developing and adopting laws "On cooperation, on the formation of statute capital stock and special funds of cooperative", etc.